ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՆԴՈՐՐԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 163-Ա
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (05.03.2011-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Չի հրապարակվել պաշտոնական պարբերականում
Ընդունող մարմին	ՀՀ վարչապետ
Ընդունման ամսաթիվ	04.03.2011
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	04.03.2011
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	05.03.2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2011 թվականի N 163-Ա

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՆԴՈՐՐԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ս. Խաչատրյանին 2011 թվականի մարտի 8-12-ը գործուղել Անդորրա (Անդորրայի Իշխանություն)՝ «Առողջություն-2020» եվրոպական ֆորումի առաջին խորհրդատվական հանդիպմանը և «Գլոբալ տնտեսական ճգնաժամի պայմաններում արդյունավետ գործունեության աջակցություն» խորագրով Տալլինյան խարտիայի իրականացման վերաբերյալ երկրորդ տարածաշրջանային խորհրդակցությանը մասնակցելու նպատակով:

2. Ընդունել ի գիտություն, որ Ս. Խաչատրյանի՝ Անդորրա գործուղման հետ կապված ծախսերը կկատարեն հրավիրող կողմի հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Հ. Քուշկյանին՝ ապահովել գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում Ս. Խաչատրյանի՝ Անդորրա գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնելը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2011 թ. մարտի 4
Երևան